ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը <<**ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/61**>>

Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ձևաչափի թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/61>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի դեկտեմբերի 16-ին ստացված հարցադրման վերաբերյալ տեղեկատվությունը.

Հարցադրում

<<Խնդրում եմ տալ պարզաբանում «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով գնանշման հայտի վերաբերյալ առաջացած ներքոնշյալ հարցի վերաբերյալ՝
1.Նշել եք, որ Ձեզ հարկավոր է A4 ձևաչափի թուղթ հետևյալ պարամետրերով՝
A4 ձևաչափի, չկավճած, մեխանիկական եղանակով ստացված, խտությունը՝ ոչ պակաս 80գ/մ2, սպիտակությունը՝ 168% և ավելի (CIE համակարգով): Հաստությունը՝ 110 մկմ (+,- 3 մկմ), անթափանցելիությունը՝ ոչ պակաս 93% , փուփերով՝ յուրաքանչյուր փուփում 500 թերթ: ISO 14001 և ISO 9706 ստանդարտներին համապատասխան:
1. Խնդրում եմ պարզաբանել. Ինչո՞վ է պայմանավորված A4 ձևաչափի թղթի սպիտակությունը 168% CIE և ավելի, անթափանցելիությունը՝ ոչ պակաս 93% պայմանը: Փաստեմ որ A կարգի A+ դասի A4 ձևաչափի թղթի սպիտակությունը սկսվում է 165CIE-ից, անթափանցելիությունը՝ 92%-ից, որը տեսանելի հատկանիշներով չի տարբերվում Ձեզ անհրաժեշտ պարամետրերով թղթից և ոչ մի կերպ չի ազդում թղթի պահպանման ժամկետի ու տպիչ սարքերի աշխատանքի վրա: Հետևաբար խնդրում եմ փոփոխել պահանջվող պարամետրերը, ինչը հնարավորության կտա ..... ՍՊ Ընկերությանը ևս մասնակցելու Ձեր կողմից հայտարավարծ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով մրցույթին:>>:

Պարզաբանում

Պետական գնման գործնթացի կազմակերպման բոլոր դեպքերում Պատվիրատուն ինքն է գնահատում իր կարիքները, որին համապատասխան սահմանվում են գնման առարկայի բնութագրերը: Տվյալ դեպքում Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ձևաչափի թղթի ձեռքբերման նպատակով հայտարարված <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/61>> ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված է գնվելիք ապրանքի այնպիսի չափորոշիչներով տեխնիկական բնութագիր, որը համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը՝ հաշվի առնելով նաև, որ այդ բնութագրին բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/61>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մ.Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010-511-783:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

<<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/61>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: